1988

615·1
S-77

142
002
1912 № 1547.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՐԱՆԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Բաժանմունքները Բաքուում և Բաթումում.

ՏՆԱՅԻՆ ԴԵՂԱՐԱՆ

Кавказское Товарищество Торговли Аптекарскими Товарами

ВЪ ТИФЛИСѢ,

Отдѣленія въ г.г. Баку и Батумѣ.

ДОМАШНЯЯ АПТЕЧКА.

ТИФЛИСЪ.
Типографія М. Мартиросянца, Пушк. ул., № 3.
1912.

Институт востоковедения АН СССР

615.1
Ч-77

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴԵՂԱՐԱՆԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ

ԹԻՖԼԻՍՈՒՄ

ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐԸ ԲԱՔՒՈՒՄ եւ ԲԱԹՈՒՄՈՒՄ.

ՏՆԱՅՆ ԴԵՂԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ՇՈՒՏԱՓՈՅԹ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

կազմած ռուսերէն բնագրից փոխադրած.
(Արձանագր. № 6. 1899 թ.)

ԹԻՖԼԻՍ.
Տպ. Մն. Մարտիրոսեանցի, Պուշկինեան փող., 3.
1912.

50208-ա

ՊԵՏ. ԿԵՆ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. Մյասնիկյանի անվ.
им. А. Мясникяна

35996-66

ՏՆԱՅԻՆ ԴԵՂԱՐԱՆ

Հիւանդներին առաջին եւ շուտափոյթ օգնութիւն հասցնելու համար՝ բժշկի բացակայութեան դէպքում:

1. ԼՈՒԾՈՂԱԿԱՆ ՁԷԹ (*Գենագերչակի*—Касторовое масло)։ *Հասակաւորներին մէկ կամ երկու հացի գդալ, երեխաներին մէկ կամ երկու թէյի գդալ։ Տալիս են խմելու փորկապութեան ժամանակ աղիքները միանգամից մաքրելու համար։ Նոյնպէս և փորլուծութեան միջոցին, որը հաճախ առաջանում է կերակուրը չմարսելուց և կամ աղիքները գրգռող որ և է բան ընդունելուց։ Առանձնապէս օգնում է գենագերչակի ձէթը նքոցի և արիւնախառն փորլուծութեան միջոցին (Դիզենտերիա)։ Անախորժ համ. ու հոտ ունենալու պատճառով առհասարակ խմացնում են թէյի, սուրճի, գինու, գարեջրի և այլ այսպիսի հեղուկների հետ կամ տալիս են կուլ տալու կապսուլներով։*

2. ԳԼԱՈՒԲԵՐԻ ԱՂ (*Լուծողական աղ Գլաուբերի* Глауберова соль). *Հասակաւորներին մէկ կամ երկու հացի գդալ բաժակ սառը ջրում լուծուած, իսկ մեծահասակ երեխաներին դրա կէսը. փոքրերին չը պէտք է*

տալ։ Գործ է ածւում նոյն դէպքերում, երբ և լուծողական ձէթը, մանաւանդ դեր մարդկանց համար, երկարատև փորկապութեան ժամանակ։

3. ԻՆՈԶԵՄՑԵՎԻ ԿԱԹԻԼՆԵՐ (Капли Иноземцева). Մեծերին իւրաքանչիւր անգամ 15—20 կաթիլ, իսկ մեծահասակ երեխաներին 5—10 կաթիլ օրական 2—3 անգամ ջրով կամ շաքարի վերայ կաթեցրած։ Տալիս են փորլուծութեան ժամանակ, աղիքները կանխապէս լուծողական ձէթով մաքրելուց յետոյ. լաւ է ընդունել և խոլերայի ժամանակ։

4. ՋՐԱԽՈՒՌՆ ԱՂԱՑԻՆ ԹԹՒՈՒՏ (Разведенная соляная кислота) Ջերմով (լիխօրադկա) բռնուած հիւանդների համար իբր օգտակար ըմպելիք տալիս են այսպէս. 30 կաթիլ խառնում են մէկ թէյի բաժակ եփտուած ու սառցրած ջրի մէջ և դրանից տալիս երկու ժամը մի հացի գդալ, իսկ երեխաներիդ մէկ կամ երկու թէյի գդալ՝ նայելով հասակին։ Գործ է դրւում վատ մարսողութեան ժամանակ, երբ հիւանդը ախորժակ չունի, կամ դուրս է գնում չմարսուած նիւթերով կամ ջերմելուց նեղուած է, իսկ երեխայքը—երբ փսխում են կարուած կաթով և կամ դուրս գնում կարծես խաշած ձուի կտորտանքով։

5. ԱՆԱՆՈՒԽԻ ԿԱԹԻԼՆԵՐ—(Мятныя капли). Սիրտ խառնելիս, բիսկալուս կամ, երբ գաղերի կուտակուելուց փորումը ծակոցներ, ցաւեր են առաջգալիս։ Տալիս են սառը ջրի հետ կամ շաքարի վերայ կաթեցրած 10—20 կաթիլ օրական մի քանի անգամ։

6. ՎԱԼԵՐԵՐՆԻ ԷԹԵՐԱՅԻՆ ԿԱԹԻԼՆԵՐ—(Эфирно-валеріановыя капли) — Թուլութեան, գլուխը պտոյտ գալու, ուշաղնացութեան, հիստերիկայի և սրտի բաբախման ժամանակ, մեծերին 15—20 կաթիլ, իսկ երեխաներին՝ նայելով հասակին 5—10 կաթիլ։ Ատամը ցաւելիս պէտք է վերցնել փոքրիկ կտոր բամբակ, թրջել այս կաթիլներով և դնել փչացած ատամի վերայ։

7. ՆԱՏԱԴՐԻ ՍՊԻՐՏ—(Нашатырный спиртъ)—Հոտ քաշել տալ ուշաղնացութեան և գլուխը պտոյտ գալու ժամանակ. միջատների կծելիս՝ քսել քորը և ցաւը մեղմացնելու համար. կատաղած կամ թունաւոր անասունների կծելիս կամ օձի կծելուց նաշադրի սպիրտը ածել ուղղակի վերքի վերայ, իբրև դաղելու միջոց։ Գինովցածներին ընդունել տալ 3—5 կաթիլ մի գինու բաժակ սառը ջրով։

8. ՔԻՆԱ-ՔԻՆԱ—(Соляно-кислый

хининъ—) *Ընդմիջուող տենդի ժամանակ* (перемежающаяся лихорадка) *տենդի սկսուելուց 4—5 ժամ առաջ տալ՝ մեծերին 8 գրան, իսկ երեխաներին՝ նայելով հասակին 1—մինչև 5 գրան։*

9. ԿԱՄՓՈՐԻ ՅԻԹ—(*քափուրի ձէթ* Камфорное масло.—*Գործ են ածում յօդացաւից կամ ռևմատիզմից առաջացած մկանունքների կամ յօդերի ցաւելու դէմ։ Նոյնպէս և ըստինքների ուռուցքների դէմ երեխային ծրծից կտրելու ժամանակ։ Գործ է դրւում և կարմիր քամու, նաև ականջացաւի դէմ (մի քանի կաթիլ ականջի մէջը)։ Ինչպէս և միջատները սատկեցնելու համար, երբ նրանք ականջը են մտնում։*

10. ԻՕԴ. (Іодная настойка) *Հաւի փետուրով կամ բամբակի կտորով քսում են դրսից մարմնի զանազան ցաւող մասերին, երբ քսելու տեղի մորթին չէ վնասուած, իսկ ներքուստ զգացւում են զանազան ցաւեր, ծակոցներ։ Ստամը ցաւելիս՝ քսել ընտերքին. կոկորդի նշաձև գեղձերի կամ խուլերի բորբոքման ժամանակ իօդը գլիցերինի հետ խառնել (մէկ մաս իօդ 10 մաս գլիցերինի հետ) և քսել։*

11. ՍԱԼԻՑԻԼԱԹԹՈՒ ՆԱՏՐ—Салициловокислый натръ)—*մեծերին 5—10*

գրան օրական 3—6 անգամ, իսկ փոքրերին 2—3 անգամ պակաս, նայելով հասակին։ Հրաշալի միջոց է նոր սկսած թարմ ռևմատիզմի դէմ, օգտակար է նաև միգրենի (կիսագլխացաւ) և նեւրալգիայի (նեարդերի, դամարների ցաւ) դէմ ընդունելը։

12. ԲԵՐԹՈԼԵՏԻ ԱՂ—(Бертолетова соль) *2% լուծուածքով (մի թէյի գդալ աղ մի բաժակ ջրում լուծուած) ողողել կոկորդի, քիմքի բորբոքման ժամանակ, ինչպէս նաև ատամները ցաւելիս կամ փտելիս։*

13. ԿԱՊԱՐԻ ՔԱՑԱԽ—Свинцовый уксусъ)—*Կաշուի ուռելուց, բորբոքուելուց և կամ թարախակալած վէրքերի համար և առհասարակ կաշուի զանազան պատճառներից վնասուելու ժամանակ գործ է դրւում դրա լուծուածքը իբրև կոմպրեսս, այսինքն մաքուր քաթանի կտոր թրջել և դնել վնասուած կաշուի վերայ։ Լուծուածքը պատրաստելու համար կապարի քացախի երկու մասը խառնում են 100 մաս ջրի հետ*—Свинцовая примочка.

14. ԱՐԵՄՆՀՈՍՈՒՄԸ ԿԱՆԳՆԵՑՆԵԼՈՒ ԲԱՄԲԱԿ—(Кровоостанавливающая вата),—*վէրքից, արգանդից և զանազան տեղերից արիւն հոսելիս այս բամբակից մի կտոր դնել վէրքի վերայ։*

15. **ԲՈՐԱՅԻՆ ԹԹՈՒ**—(Борная кислота)—*Մէկ թէյի գդալ մէկ թէյի բաժակ տաք ջրում հալեցրած 1—2 ժամը մի անգամ ողողել բերանը կոկորդի քիմքի բորբոքման ժամանակ, գործ է դրւում նաև աչքերը լուանալու համար, երբ նրանք ճպռոտում են կամ թարախակալում։ Դրանով պէտք է լուանալ մաքրել նաև ամէն տեսակ վէրքեր և խոցեր։*

16. **ԽՈՆԱՒԱԾԻԾ ԲԱՄԲԱԿ**—(Гигроскопическая вата)—*Վիրակապերի համար։*

17. **ՓԱՓՈՒԿ ՄԱՐԼԻԱ**—(Марля мягкая) *Վէրքերը կապելու համար։*

18. **ԲԻՆՏ**—(Бинтъ) *Վէրքերը կապելու համար։*

19. **ՔՍԵՐՈՖՈՐՄ**—(Ксероформъ)—*Վէրքերի վերայ են ցանում և յետոյ վիրակապ դնում։*

20. **ՋԵՐՄԱՉԱՓ**—(Термометръ) *տաքութիւնը չափելու համար։*

21. **ԲԱԺԱԿ—ՐԻՒՄԿԱ**—(Стаканчикъ для пріема лекарствъ)—*Դեղ ընդունելու համար։*

Библ. Инст. Востоковедения Академии Наук СССР
ՊԵՏ ԳԻՆ ԳՐ-ԴԱՐԱՆ Гос Библиотека ՀՍՍՌ-Арм ССР им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

24 21176

Правленіе, контора, экспедиція и склады

Театральная улица собствен. домъ.
Телефонъ № 77.

МАГАЗИНЫ ДЛЯ РОЗНИЧНОЙ ПРОДАЖИ:

Эриванская площ., домъ Гургенова.
Телефонъ № 64.

Михайловск. пр., д. Рукса № 106.
Телефонъ № 168.

Адресъ для Писемъ:

Кавказское Товарищество Торговли Аптекарскими Товарами въ Тифлисѣ.

Адресъ для телеграммъ:

Тифлисъ—„Санитасъ"
Баку „
Батумъ „

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

615.1
Ս-77

1988

2013